



«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2022 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՅՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 3 տպագիր և 1 դատարկ էջերից:

Առաջադրանք 1 Միրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված տեքստը մի հատված է Բաֆֆու «Խենթեր» վեպից: Ընթերցի՛ր այն և պատասխանի՛ր հարցերին:

Բայց մի բան, որ ավելի զարմացնում էր Վարդանին, այդ այն էր, որ բոլոր գյուղացի բանվորները որտեղ և հանդիպում էին նրան, աչքի էին ընկնում իրանց համարձակությամբ, անձնավստահությամբ և այրական անվեհերությամբ: Կարծես դրանք սնվել և մեծացել էին կատարյալ ազատության մեջ, կարծես դրանք երբեք թուրքի ապտակը չէին կերել կամ քրդի նիզակը մի անգամ գոնե չէր վախեցրել նրանց: Նա տեսնում էր, որ այդ աշխատող բազմությունը ընդունակ է հարկը պահանջած ժամանակ, թողնել բահը և արորը, և նրանց փոխարեն զենք կրել, և նույնպես հմուտ, նույնպես հաջողակ կերպով գործ ածել:

- Պատերազմի ժամանակ այդ մարդիկը զինվոր են դառնում,- ասաց Վարդանի հյուրընկալը,- աշխատանքը մեծ մասամբ դադարում է, և այս պատճառով պատերազմը միշտ կորստաբեր հետևանքներ է ունենում մեր երկրի համար, թեև նա ունենում է և իր առանձին օգուտները:

Անցնելով դաշտերից, նրանք դարձյալ մոտեցան գյուղին: Նրանց առջև դրած էր մի նոր հիմնարկություն: Դա ավելի նման էր այն շենքերին, որ կառուցված են լինում օրինակելի ագարակների մեջ:

- Այդ մեր գյուղատնտեսական դպրոցն է,- ասաց Վարդանի հյուրընկալը: Այն, որ տեսաք առավոտյան, տարրական ուսումնարան էր:

Այս ի՞նչ դպրոց էր, այսպիսի դպրոց Վարդանը երբեք չէր տեսել, թեև ինքն էլ մի ժամանակ վարժապետ էր եղել: Նա բովանդակում էր իր մեջ գյուղային տնտեսության վերաբերյալ բոլոր պարագայքը: Նրա ահագին շինության առջև տարածված էր ընդարձակ ագարակ զանազան բաժանմունքներով, որ մշակվում էին աշակերտների և աշակերտուհիների ձեռքով: Աշխարհի համարյա բոլոր բույսերի, տունկերի և ծաղիկների տեսակից կային այնտեղ զանազան օրինակներ: Այստեղ զիրքը և մեռած տառը ավելի չէին զբաղեցնում ուսանողներին: Ամեն ինչ սովորում էին նրանք բնության հրաշալի գրքի մեջ: Այստեղ որոշյալ ժամերում ուսանողները պարապվում էին մարմսամարզությամբ և զենք գործ ածել, վարժություններով: «Ահա այսպիսի դպրոցը կպատրաստե լավ երկրագործ և լավ զինվոր», - մտածում էր Վարդանը:

Հարց 1 Որտեղի՞ց է առաջացել «Բաֆֆի» գրական անվանումը, և ի՞նչ է գրողի անուն-ազգանունը: (2 միավոր)

Բաֆֆի գրական անվան շուրջ կան տարբեր մեկնաբանություններ: Պատմաբան Լեոն վկայում է, որ Բաֆֆին իր կեղծանունը վերցրել է արաբերենից, որը նշանակում է բարձր, վսեմ: Ըստ կենսագիրներից մեկի՝ րաֆֆի, արաբերենից պարսկերենի անցած բառ է և մեկն է պարսկական այն տիտղոսներից, որոնք տրվում են պարսից բարձրաստիճան անձնանց՝ պետությանը մատուցած հատուկ ծառայությունների համար: Կա նաև տեսակետ, որ րաֆֆի բառը ասորական ծագում ունի, րաբբի կամ րաբունի ձևով անցել է եբրայերենին և նշանակում է վարդապետ:

Գրողի անուն-ազգանունը Հակոբ Մելիք-Հակոբյան է:

1 միավոր - գրական անվան բացատրությունը

1 միավոր -անուն-ազգանուն նշելը

Հարց 2 Գրի՛ր, թե գրական որ մեթոդին է հետևել Բաֆֆին իր վեպերում և թվարկի՛ր նրա մյուս ծրագրային վեպերը: (3 միավոր)

Բաֆֆին իր վեպերը գրելիս գործածել է գաղափարապաշտական մեթոդը, որը ներկայացնում է իդեալ հերոսի կերպարը՝ գաղափարապաշտ հերոսին: Բաֆֆու վեպերին բնորոշ է ազգային գաղափարապաշտությունը, որը հազեցած է հայ ժողովրդի փրկության, օտար լծից երկրի ազատագրման ազգափրկիչ ծրագրերով:

Մյուս վեպերի վերնագրերն են՝ «Ջալալեդին», «Կայծեր»:

1 միավոր - գեղարվեստական մեթոդ

2 միավոր -վեպերի վերնագրերը

Հարց 3 Վարդանի երազում Բաֆֆին ներկայացնում է ապագա Հայաստանի հանրային, կրթական, տնտեսական ու քաղաքական կյանքի պատկերը 200 տարի անց: Ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ կարելի է առանձնացնել այսօրվա հայաստանյան զինվորական և կրթական համակարգի ու Բաֆֆու ծրագրի միջև: Ո՞ր հասարակարգն է հիշեցնում Բաֆֆու ծրագրային մոդելը: (5 միավոր)

Ըստ Բաֆֆու երազի՝ գյուղացի բանվորները աչքի են ընկնում իրենց համարձակությամբ, անձնավստահությամբ և անվեհերությամբ: Իսկ պատերազմի ընթացքում զենք են վերցնում և դառնում զինվորներ: Այն հիշեցնում է սոցիալիստական հասարակարգը: Ի տարբերություն Բաֆֆու ծրագրի՝ այժմյան Հայաստանում ունենք հայկական կանոնավոր բանակ, որտեղ հայ երիտասարդները ձեռք են բերում զինվորական պատրաստվածություն և պաշտպանում հայկական սահմանները: Այսօրվա զինվորները ևս աչքի են ընկնում իրենց խիզախությամբ և համարձակությամբ:

Բաֆֆին առաջարկում է կրթական յուրահատուկ համակարգ: Մեջբերված հատվածից տեղեկանում ենք, որ դասերն ունեն ավելի գործնական բնույթ, քան տեսական: Աշակերտներն իրենք են մշակում հողը, ցանում զանազան բույսեր ու ծաղիկներ, և դրանց միջոցով ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքներ: Այժմյան դպրոցում աշակերտները բնությունը բացահայտում են դասագրքերի միջոցով:

Հարց 4 Հատվածի համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում: Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը (5-6 նախադասություն): (6 միավոր)

Ազատ պատասխան:

Առաջադրանք 2 Միրելի՛ դիմորդ, ընթերցի՛ր Վահան Տերյանի «Այնպես անխինդ են և նըման լացին» բանաստեղծությունը և պատասխանի՛ր հարցերին:

Այնպես անխինդ են և նըման լացին

Այնպես անխինդ են և նըման լացին
Երգերն իմ երկրի, այնպես տխրագին.
Մեզ չի հասկանա օտարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օտարուհին:

Այն մելամաղձիկ, լացող, միալար
Ելևէջները ներդաշնակ այնպես
Եվ հարագատ են սրտին մեր մոլար,
Հոգուն մեր բեկված, ավերված, հրկեզ...

Տեսնում եմ ահա գյուղերը մեր խեղճ,
Եվ թուխ դեմքերն այն տխրության սովոր.
Իմ ժողովուրդը անել վշտի մեջ,
Երկիին իմ անբախտ և աղետավոր:

Թող հնչե երգն այդ դառն ու ցավածին,
Երգը հայրենի ցավագար ու հին,
Մեզ չի հասկանա օտարերկրացին,
Մեզ չի հասկանա սառն օտարուհին...

Հարց 1 Նշի՛ր Վահան Տերյանի ծննդավայրը: (1 միավոր)
Վահահ Տերյանը ծնվել է Ջավախքի Գանձա գյուղում:

Հարց 2 Գրական ո՞ր մեթոդին է հետևել Վահան Տերյանն իր բանաստեղծություններում: (1 միավոր)
Վահան Տերյանի ստեղծագործություններին բնորոշ է խորհրդապաշտությունը (սիմվոլիզմը):

Հարց 3 Բանաստեղծությունից դու՛րս գրիր երկու տարբեր պատկերավորման միջոցի օրինակ՝ դիմացը նշելով տեսակը: (2 միավոր)

Գյուղերը խեղճ – մակդիր

Այնպես անխինդ են և նրման լացին – համեմատություն

(Կան այլ պատասխաններ եւս):

Հարց 4 Նշի՛ր Վահան Տերյանի բանաստեղծական վեց շարքերի վերնագրերը: (3 միավոր)
Վահան Տերյանի բանաստեղծական վեց շարքերի վերնագրերն են՝ «Մթնշաղի անուրջներ», «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», «Ոսկե շղթա», «Երկիր Նաիրի», «Կատվի դրախտ» (կան այլ պատասխաններ եւս):

0,5 միավոր - յուրաքանչյուր բանաստեղծական շարքի համար

Հարց 5 Բացատրի՛ր «Մեզ չի հասկանա օտարերկրացին» կրկնվող տողի կապը բանաստեղծության տների բովանդակության հետ: (4 միավոր)

Բանաստեղծության բոլոր տները միասին կազմում են տխրության ու վշտի տրամադրության ամբողջություն: Եվ այդ տրամադրության ստեղծմանն ու ծավալմանը նպաստում է առաջին և վերջին տներում կրկնվող «Մեզ չի հասկանա օտարերկրացին» տողը:

Այսպես՝ առաջին տան մեջ բանաստեղծը հայրենիքում հնչող երգերը բնորոշում է՝ որպես «անխինդ», «լացին նման» և «տխրագին»: Եվ ավելացնում, որ մեզ չի հասկանա օտարերկրացին:

Երկրորդ տան մեջ ցավի տրամադրությունն ավելի է սաստկանում՝ հայկական երգը բնորոշելով որպես «մելամաղձիկ», բայց մեր հոգուն՝ հարազատ ու ներդաշնակ:

Շարունակվում է առաջին տան մեջ կրկնվող տողի տրամաբանությունը. օտարերկրացին չի կարող ըմբռնել մեր հոգու ցավը:

Երրորդ և չորրորդ տներում ցավին հաջորդում է վշտի տրամադրությունը: «Անբախտ» ու «աղետավոր» երկրում երգը դառն է ու ցավածին: Բանաստեղծության մեջ տների տրամադրությունները իրենց տրամաբանական ավարտն են ստանում կրկնվող տողի հոնտորական հարցադրմամբ. մեր ցավն ու վիշտը անհաղորդ է օտարերկրացուն ու սառն օտարուհուն:

Հարց 6 Ինչո՞ւ է Վահան Տերյանն իր հայրենասիրական բանաստեղծությունների շարքը վերնագրել «Երկիր Նաիրի»: Մեկնաբանի՞ր «Նաիրի» անվան ծագումն ու պատմությունը: Հիմնավորի՞ր պատասխանդ: (5 միավոր)

Վահան Տերյանը շարքը վերնագրել է «Երկիր Նաիրի»՝ հարություն տալով Հայաստանի հնագույն անվանումներից մեկը: Տերյանը հավատում է Հայաստանի հարությանը և այդ պատճառով էլ օգտագործել է եգիպտական բուրգերի և փյունիկի խորհրդանիշները: Նրա հույսի բարձրագույն խորհրդանշանը Արարատ սարն է, որ հավատ ու հպարտություն է ներշնչում:

«Նաիրի» անվանումը առաջին անգամ հիշատակվել է Ասորեստանի Սալմանասար Ա թագավորի սեպագիր արձանագրության մեջ, որտեղ նա հայտնում է, որ դեպի հյուսիս կատարած արշավանքների ժամանակ նվաճել է Նաիրի երկիրը:

Նաիրին ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում Վանա լճի մերձակա տարածքներում բնակվող ցեղային միավորումներից մ.թ.ա. 14- 10-րդ դարերում: «Նաիրի» անունը աքքադերենից թարգմանաբար նշանակում Գետերի երկիր: